

ՊԱՏՄԱԺԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՅՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Լեռնային Ղարաբաղում պատմաճարտարապետական յուշարձանների պահպանման եւ վերականգնման գործընթացի ներկայացումը կ'ուզէինք սկսել այդ համալիրների վիճակի մասին խօսակցութեամբ: Հայոց ցեղասպանութեան մասին մտորելիս ականաջ մտաբերում ենք միայն աւելի քան մէկուկէս միլիոնի հասնող անմեղ հայերի անմարդկային բնաջնջումը տարատեսակ եղանակներով: Մինչդեռ կորուստներ են կրել նաեւ ճարտարապետական յուշարձանները: Այդ կորուստն ամբողջութեամբ համապատասխանում է միջազգային ատեանների ընդունած մշակութային ցեղասպանութիւն եզրոյթի չափորոշիչներին¹:

Մշակութային այդ եղեռնը տեղի էր ունենում ոչ միայն բռնազրաւուած մեր պատմական հայրենիքի ամբողջ տարածքում, այլեւ՝ Խորհրդային Ադրբեջանում: Այս առումով Հայաստանի յարակից երկրների թւում առանձնանում է միայն Իրանը, որտեղ հայկական յուշարձանները պահպանուել են եւ նոյնիսկ վերանորոգուել: Ադրբեջանական իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը քրիստոնէական հայ ճարտարապետական յուշարձանների հանդէպ հիմնականում ունեցել է մի քանի ուղղութիւն՝ դրանց մասին պաշտօնական հրատարակութիւններում՝ լուրթեան պահպանում, էթնոմշակութային եւ կրօնական պատկանելութեան խեղաթիւրում, յուշարձանների կանխամտածուած աւերում եւ այլափոխում, յուշարձանների նկատմամբ զանազան բարբարոսական գործողութիւնների իրականացում (պայթեցումներ բնակավայրերի տարածքներում), շինութիւնների աւերում, հրկիզում եւ որպէս շինաքարի օգտագործում, եկեղեցիների վերածում գոմերի, պահեստների եւ այլ նշանակութեան շինու-

1 CHARNY, I. W., *Classification of Genocide in Multiple Categories*, *Encyclopedia of Genocide*, Israel W. Charny editor in chief, v. 1, Santa Barbara, California, 1999, 9.

թիւները, հայկական եկեղեցիները՝ մահմեդական կառույցների վերափոխում, հայկական շատ յուշարձանների քողարկում՝ հողով ծածկելու միջոցով, այցելութիւնների եւ ուսումնասիրութիւնների արգելում, վերականգնման եւ պահպանութեան քղի ներքոյ յուշարձանների ծաւալատարածական յօրինուածքի, կերպարի եւ ինքնութեան ճարտարապետական այլափոխում:

Այս ամէնը հետապնդում էր մի նպատակ՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում վերացնել հայկականութեան հետքերը, որպէսզի հայ ժողովրդի արցախեան հատուածը վերագրուի ադրբեջանցիների կարծեցեալ հայրենիքը հանդիսացող Ադուանքին եւ հիմնաւորուի այստեղ կերտուած նիւթական ու մշակոյթային յուշարձաններն ադուանական (ադրբեջանական) համարելու հնարածին վարկածը:

Ադրբեջանական ԽՍՀ տարածքում հայկական մշակութային յուշարձանները բացարձակ մեծամասնութիւն էին կազմում՝ շուրջ 11 հազար, ընդ որում՝ դրանց թիւը միայն Ղարաբաղում հասնում էր 1700ի²: Սակայն պաշտօնական փաստաթղթերում արձանագրւում էր բոլորովին այլ պատկեր: Պետական պահպանութեան ներքոյ գտնուող 591 յուշարձաններից միայն քսանհինգն էր հայկական, որոնցից ընդամէնը եօթը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1968 Ապրիլի 2ի թիւ 140 եւ 1988 Ապրիլի 27ի թիւ 145 որոշումներում հաստատուած են Ադրբեջանի տարածքում գտնուող՝ պետութեան կողմից ընդունուած յուշարձանները, որոնց թւում բացակայում է նոյնիսկ Գանձասարի վանական համալիրը³:

Պայթուցիկ նիւթեր են օգտագործուել Մեծ Թաղլարի եւ Ազոխի քարանձաններում, Ամարասի եւ Կաղանկատոյքի բնակավայրերի տարածքներում: Փորումներ են կատարուել Գրիգորիսի դամբարանում (Ամարասի վանքում), երկրաբանական հետազոտութիւններ կատարելու պատրուակով հորանցքներ են փորուել Դադիվանքի յուշարձանների տակ... ԺԲ. եւ ԺԳ. դարերի երկու կամուրջ, ԺԳ.-ԺԷ. դարերի 3 մատուռ, շուրջ 70 խաչքար, դամբարաններ՝ առանց օրէնքի արձանագրելու զոհ են դարձել Սարսանգի ջրամբարի կառուցմանը՝ քարերն օգտագործելով պա-

2 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, Երևան 1999, 7:

3 Անդ:

տուևարի մէջ կամ թողնելով ջրամբարի յատակում⁴։ Հայկական վանքերի ու եկեղեցիների սրբատաշ քարերն օգտագործուել են նաեւ գիւղերում տներ եւ այլ շինութիւններ կառուցելու ժամանակ։ 1950ականներին քանդուած Գետամիջոյ Սբ. Աստուածածին վանքի շուրջը գոյացել էր Վանք գիւղը։ Վանքի քարերն օգտագործուել են այդ գիւղի տների, նոյնիսկ գոմերի պատերի կառուցման համար։ Վանքի շատ քարեր հանդիպում են վերոնշեալ թուականներին Չրաղ (որ Ճրագի աղաւաղուած տարբերակն է) գիւղի դպրոցի պատերի շարուածքում⁵։

Յուշարձանի ոչնչացման եւ քարերը որպէս շինաքար օգտագործելու օրինակ է նաեւ Տաք ջուր (Խստիսու) առողջարանի շրջակայքի՝ հայկական միջնադարեան եկեղեցիների քարերով կառուցուած կառավարական առողջարանը⁶։

Ադրբեջանցիների կողմից յուշարձանների ինքնութեան ոչնչացման քաղաքականութիւն էր նաեւ նորոգման կազմակերպումը, որի աշխատանքների զոհ է դարձել Գանձակ քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցին, որ երեսապատուել է աղիւսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը եւ օգտագործուել որպէս ժողովուրդների բարեկամութեան պալատ⁷։ Այլափոխուել է նաեւ Վանքասարի է. դարի եկեղեցու ծաւալը։

Յուշարձանների աւերումը մեծ չափերի է հասել արցախեան պատերազմի ժամանակ, երբ օգտուելով ընձեռուած առիթից՝ եկեղեցիներն ու վանքերը կանխամտածուած պայթեցուել են, հրետանակոծուել ու քանդուել։ Արդիւնքում Գետաչէնի մօտ գտնուող Եղնասարի կանգուն վանքը վերածուել է աւերակների։ Գնդակոծուել են Գանձասարի, Ամարասի, Դաղիվանքի տաճարները, Տող գիւղի եկեղեցին եւ այլ յուշարձաններ։ Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին այդ տարիներին երեք անգամ հրկիզուել է։

4 ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Վ., *անդ.*, 110-119։

5 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., *անդ.*, 69։

6 ՄԿՐՏՁԵԱՆ, Շ., *Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանութեան անատմիան*, Ստեփանակերտ 2003, 207։

7 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., *Հայկական յուշարձանների վիճակը Հայաստանի հաբեւան երկրներում, ի վասն հայութեան, շարաքաքերի*, 2002, 23 Ապրիլ, 11։



Նկար 1. Շուշիի Սր. Ամենափրկիչ եկեղեցին՝ ագատագրումից (1) և վերականգնումից (2) յետոյ:

1991 Շուշիի Մեղրեցոց եկեղեցին վերածուել էր ամառային կինոթատրոնի, Կանաչ ժամը՝ Հանքային ջրերի սրահի, որի հետեւանքով եկեղեցու կառույցը վտանգուել է⁸: 1990 Մայիսի 20ի համարում «Սովետական Ղարաբաղ» թերթը գրում էր. «Ադրբեջանական զինուած բանդայական ձեւաորումները չեն դադարեցնում գազանութիւնները Ամարասի հովտում: Այստեղ տեղափոխուած տնտեսական կառույցները աւերելուց եւ քաղանկուց յետոյ Մայիսի 18-19ին նրանց գազանութիւնների օրյէկտը դարձաւ Ամարասի վանքը: Իրենց հետ բերելով աւերման անհրաժեշտ ողջ տեխնիկան, յանցագործները ջարդեցին վանքի դռները եւ պատուհանները, գողացան կահոյքը, յափշտակեցին վանքի գանձարանը»:

Ագատագրուած տարածքներում եւ մասնաւորապէս Քարվաճառում, Մարտակերտում եւ Ասկերանում հետախուզական շրջայցերի եւ հնագիտական պեղումների ընթացքում մենք եւս հանդիպել ենք այլեւայլ եղանակներով յուշարձանների ոչնչացման դէպքերի: Ծար պատմական բնակավայրում, որ Խորհրդային Ադրբեջանի կազմում յայտնի էր հնչիւնափոխուած Զառ ձեւով, 1950ականներին կառուցուել են մի քանի բնակելի տներ եւ գիւղի դպրոցը, որի պատերում որպէս շինաքար օգտագործուել են նաեւ արձանագրակիր քարերի, խաչքարերի, տապանաքարերի բեկորները:

8 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ, Ն., Ադրբեջանի ռազմական յանցագործութիւնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խաղաղ բնակչութեան նկատմամբ, Երեւան 1998, 149-150:



Նկար 2. Ծար. Խորհրդային շրջանում կառուցուած դպրոցի պատերի մէջ որպէս շինաքար օգտագործուած ջարդոտուած խաչքարերի եւ արձանագրակիր քարերի բեկորներ:

Արցախի Վերին Խաչէն գաւառում գտնուող Չարեքտարի վանքի (այժմ ԼՂՀ Մարտակերտի շրջան, գիւղ Չարեքտար) կառուցները ձեւափոխել էին եւ տասնամեակներ շարունակ օգտագործել որպէս անասնագոմ: Այստեղ եւս պեղումներ եւ հետազոտական աշխատանքներ են իրականացուել եւ վանքն այսօր ներկայանում է որպէս երեք եկեղեցի, գաւիթ, եւ սրան հարաւային կողմից կցուած կից սրահով եւ զոյգ աշտարակներով ամրացուած պարսպապատ մի քայքայուած համալիր:



Նկար 3. Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը (1) եւ գոմի վերածուած եկեղեցու ներքին տեսքն (2) ադրբեջանական օգտագործման ժամանակ:

9 ԱՅՎԱԶԵԱՆ Ա.- ՍԱՐԳՍԵԱՆ Գ., Չարեքտարի վանական համալիրի պեղումների եւ հետազոտութիւնների արդիւնքները, Ի Վարձ, 2011, քիւ 4, Մայիս-Հոկտեմբեր, 48-58:

Ի պատասխան հակադիտական այդ տեսակետների՝ հայ գիտնականները ադրբեջանական պատմագիտութեան կեղծարարութեան վերլուծութեան հիման վրայ փորձել են վեր հանել Արցախի մշակույթի քննութեան տեսական ու քաղաքական հիմքերը, բացայայտել Ղարաբաղում թուրքական էթնոսի բնիկ լինելու եւ հայերի եկոտրութեան մասին ադրբեջանցի պատմաբանների առաջադրած հայեցակարգի սնանկութիւնը, հետեւաբար՝ արցախահայութեան մշակութային, մասնաւորապէս ճարտարապետական ժառանգութեան իւրացման փորձերի կատարելապէս հիմնադրել լինելը¹⁰։ Առանձնացուել է «Արցախի նարտարապետական դպրոց» հասկացութիւնը, որն առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ է դրել Պաուլոյ Կունէոն¹¹, իսկ Արցախի յուշարձանների ուսումնասիրութեան նախակարապետը Ա. Եսոլչարճանների ուսումնասիրութեան նուիրուած հանգամանալից ուկրաինէն է՝ Գանձասարի վանքին նուիրուած հանգամանալից ուսումնասիրութեամբ¹²։ Յետագայում արդէն Շ. Մկրտչեանը, Մ. Հասրաթեանը, Ս. Կարապետեանը, Ա. Ղուլեանը, Վ. Յարութիւնեանը, Հ. Պետրոսեանը, Լ. Կիրակոսեանը, Ժ. Մ. Թիերին, Պ. Տօնապետեանը¹³ եւ այլք իրենց աշխատութիւններում բացայայտել են ոչ միայն Արցախի ճարտարապետութեան ամբողջ հարստութիւնը, առանձնայատկութիւնները՝ որպէս միջնադարեան հայտնութիւնը, առանձնայատկութեան առանձին դպրոց, այլեւ ճարտարապետական յուշարձանների բարձիթողի, աւերուած, խաթարուած վիճակը։

10 САФАРЯН, В., К вопросу о методике присвоения истории и культуры Арцаха в современной азербайджанской историографии, *Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անցնալը, ներկան ու ապագան։ Միջազգային գիտաժողով*, Երեւան 2007, 206։

11 CUNEO, P., *Le scuole regionali nell'architettura Armena*, Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena-1975, Venezia 1978, 9.

12 ЯКОБСОН, А., Гандзасарский монастырь, Исследования по истории культуры народов Востока, (Сборник в честь академика И.О. Орбели), М.-Л. 1960, 145-158.

13 ՄԻՐՏՉԵԱՆ, Շ., *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, Երեւան 1985։ ՀԱՍՐԱԹԵԱՆ, Մ., *Հայկական ճարտարապետութեան Արցախի դպրոցը*, Երեւան 1992։ ՂՈՒԼԵԱՆ, Ա., *Արցախի եւ տուրքեան Արցախի դպրոցը*, Երեւան 2001։ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Սիւնիի մելիքական ապարանքները, Երեւան 2003։ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Վ., *Դարը մեր մէջ, մենք՝ դարի*, Երեւան 2003։ TIERRY, J. M.-DONABEDIAN, P., *Les arts arméniens*, Paris 1987.

Նախքան արցախեան շարժումը հայագիտութեան նուիրեալները բնականաբար, զրկուած էին Լեռնային Ղարաբաղում համապարփակ հետազոտութիւններ իրականացնելու հնարաւորութիւնից: Այսօր արդէն ազատագրուած տարածքներում Արցախի հին եւ միջնադարեան մշակոյթի ուսումնասիրութեան, պահպանութեան եւ վերականգնման համար բարենպաստ պայմաններ են ստեղծուել:

Այդ աշխատանքներն սկսուել են, կարելի է ասել, եթէ ոչ ռազմական զործողութիւններին զուգահեռ, ապա տարածքների ազատագրումից անմիջապէս յետոյ:

Արցախի հնագիտական արշաւախմբի¹⁴ տասնամեայ հնագիտական պեղումների եւ աշխատանքի արդիւնքում յայտնաբերուել, յաւուր պատշաճի ներկայացուել ու պահպանութեան տակ են վերցուել են մի շարք յուշարձաններ (Արցախի Տիգրանակերտ, Հանդաբերդի վանական համալիր, Վանքասարի վաղքրիստոնէական եկեղեցի): Դա առաջին հերթին Արցախի Տիգրանակերտ քաղաքն է: Այստեղ՝ քանի որ պեղումները շարունակուում են, իրականացուում են լանդշաֆտի պահպանման, տարածքի բարեկարգման եւ յուշարձանների պահպանմանը նպաստող միջոցառումներ՝ պահպանութեան գօտիների, ջրահեռացման համակարգերի ստեղծում, մասնակի ամրակայումներ եւ այլն: Սահմանուել են Արցախի Տիգրանակերտի պահպանութեան գօտիները: Պատմական միջավայրի պահպանական համակարգը ներառում է քաղաքի պահպանութեան, կառուցապատման կարգաւորման, հնագիտական եւ լանդշաֆտի պահպանման գօտիները:

Քաղաքի պահպանութեան գօտին նրա ողջ՝ շուրջ 70 հա ընդգրկող տարածքն է: Այստեղ են գտնուում Տիգրանակերտի ամրացուած թաղամասը միջնաբերդի հետ միասին, կենտրոնական եւ անտիկ թաղամասերը, վաղքրիստոնէական դամբարանադաշտերը, ինչպէս նաեւ ԺԸ. դարի ամրոցը, որն այժմ որպէս Տիգրանակերտի թանգարան է շահագործուում: Այս տարածքում են ընդգրկուած նաեւ Վանքասարի ստորոտում՝ աղբիւրների մօտ գտնուող պատմական յուշարձանը, պեղումներով բացուած վաղքրիստոնէական բազիլիկաները: Գօտու բնական սահմանը արեւելքում Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու մօտ 1,0

14 Արշաւախումբը ղեկավարում է պ.գ.դ. Հ. Պետրոսեանը, մասնակցում են հմագէտներ՝ Վ. Սաֆարեանը, Ի. Կարապետեանը, Տ.՝ Վարդանետովան, Ա. Ժամկոչեանը, արշաւախմբի ճարտարապետն է Լ. Կիրակոսեանը:

կմ ձգուող հատուածն է: Արեւմուտքում այդ սահմանը Վանքասարի համեմատաբար ցածր բարձունքներից մէկի աւարտն է՝ խանդակից 30 մ վերեւ: Հարաւային կողմում սահմանը Վանքասարին հանդիպակաց բարձունքն է, իսկ հիւսիսում՝ մինչեւ սարին յարող ձորակի մերձակայ տարածքը: Այս գօտին ունի առաւել խիստ հսկողութեան համակարգ: Այն կոչուած է յուշարձանախումբը գերծ պահել ֆիզիկական վնասակար ազդեցութիւններից եւ ամրապնդել նրա յօրինուածքային եւ տեսողական նպաստաւոր կապերը շրջապատող միջավայրի հետ: Պահպանութեան գօտու մէջ են վերցուած նաեւ Վանքասարի վաղբրիստոնէական խաչածեւ կենտրոնագմբէթ եկեղեցին՝ իրեն յարող հարթակով հանդերձ, ինչպէս նաեւ քարայրային պաշտամունքային համալիրը, անտիկ դամբարանադաշտը:

Տիգրանակերտի պահպանութեան գօտում

ա. պահպանում է պատմական յատակագիծը, միջավայրն ու համայնապատկերը,

բ. արգելւում է յուշարձաններին անմիջապէս չվերաբերող կրպակների եւ գովազդային վահանակների տեղադրումը,

գ. չի թոյլատրւում յուշարձանների եւ հնավայրի պահպանութեան հետ չառնչուող աշխատանքների կատարում, այդ թւում՝ գիւղատնտեսական:

Տիգրանակերտի պահպանութեան գօտում, հնավայրի պեղումներն իրականացող՝ Արցախի հնագիտական արշաւախմբի եւ պատմութեան ու մշակոյթի յուշարձանների պահպանութեան պետական մարմինների համաձայնութեամբ իրականացուել են մի շարք միջոցառումներ.

- ԺԸ. դարի ամրոցը վերանորոգուել է եւ շահագործւում է որպէս Տիգրանակերտի հնագիտական թանգարան,
- բարեկարգուել է թանգարանի տարածքը, արտաքին լուսաւորութիւնը նպաստում է յուշարձանի առաւել շահեկան ընկալմանը,
- ապամոնտաժուել են պատմական միջավայրին անյարիր չինութիւնները (մասնաւորապէս թանգարանին յարող տարածքում գտնուող խառնաշփոթ հիւղակները եւ ժամանակաւոր կացարանները):

Տիգրանակերտի կառուցապատման կարգաւորման գօտին քաղաքի պահպանութեան գօտուն յարող տարածքն է, որտեղ սահ-

մանուկ էն շինարարական տարբեր կանոնակարգեր, որոնցում նշուում են շինարարութեան հետեւեալ պայմանները՝

ա. պահպանել հին յատակագիծը, համայնապատկերի արժէքաւոր տարրերը, բարելաւել քաղաքի տեսողական ընկալման հնարաւորութիւնները, վերացնել պատմական միջավայրին չներդաշնակող ու յուշարձանի վրայ բացասաբար ներգործող կառոյցները:

բ. կառուցապատման կարգաւորման գօտում նոր շինարարութիւն կարող է իրականացուել վերոնշեալ մարմինների անմիջական վերահսկողութեան եւ թոյլատուութեան պայմաններում: Այդ կառուցապատումն իրականանալի է եթէ չի հակադրում քաղաքի պատմական կերպարին եւ մշակութային, բարեկարգման եւ կանաչապատման բնոյթի է:

Քաղաքի հնագիտական գօտին հնարաւոր է եղել սահմանել Արցախի հնագիտական արշաւախմբի կողմից կատարուած հետազօտութիւնների տուեալների հիման վրայ: Այն իր մէջ ներառում է դամբարանադաշտը, որ ընդգրկում է Ստեփանակերտ Մարտակերտ ճանապարհի աջ կողմում տարածուող Տիգրանակերտին հանդիպակաց հատուածը, ինչպէս նաեւ դեռ չպեղուած մշակութային շերտերով տարածքները: Այս գօտին նաեւ պահպանութեան գօտի է, որտեղ ցանկացած շինարարական աշխատանքներ սկսելուց առաջ պէտք է կատարուեն հնագիտական հետազօտութիւններ: Անգամ հողային աշխատանքները պէտք է կատարուեն պահպանութիւնն ապահովող լիազօրուած մարմինների եւ պարտադիր կերպով պեղող հնագէտների հսկողութեան ներքոյ:

Տիգրանակերտի լանդշաֆտի պահպանման գօտին կոչուած է ապահովել բնական ռելիեֆի, քաղաքի մատոյցներում՝ լեռան տակից բխող աղբիւրների եւ աւազանների պահպանութիւնը, վերականգնել բնակավայրի համայնապատկերի պատմական տեսքը, ինչպէս նաեւ այն տարածքների պահպանութիւնը, որոնք ազդում են քաղաքային լանդշաֆտի վիճակի վրայ: Համայնապատկերի պահպանութեան համար պէտք է՝


ա. վերացուեն պատմական լանդշաֆտն աղաւաղող շինութիւնները (ի մասնաւորի արցախեան պատերազմում աւերակների վերածուած՝ խորհրդային շրջանում կառուցուած շէնքերը),

բ. թոյլատրուեն այնպիսի կառուցապատումներ, որոնք չեն խաթարում լանդշաֆտը: Անթոյլատրելի են այնպիսի կառուցումները, որոնք անյարիր են ինչպէս ձեռակերտ, այնպէս էլ

անձեռակերտ պատմական միջավայրին եւ խախտում են բնական մասշտաբը:

դ. պահպանողի այն բուսականութիւնը (նռնենիները, թզենիները), որը բնորոշ է Տիգրանակերտին,


դ. զբօսաշրջութեան խթանման, քաղաքի պեղուած հատուածների ամրակայման եւ պահպանման ժամանակ իրագործել տարածքի բարեկարգում, հետիոտն ուղիների եւ հարթակների ստեղծում, ընդ որում առանց լանդշաֆտն աղաւաղող կապիտալ եւ ընդհակառակը, լանդշաֆտին ներդաշնակող եւ համայնապատկերի ամբողջական ընկալմանը նպաստող շինութիւնների:



Նկար 4. Արցախի Տիգրանակերտի տեղահանդերձ քարտեզը ցուցաբերող համալիրների նշումով

Ջրահեռացման համակարգ է ստեղծուել Արցախի Տիգրանակերտի կենտրոնական թաղամասում բացուած վաղքրիստոնէական եկեղեցում: Պեղումներից յետոյ եկեղեցին յայտնուել է 500

քառ. մ մակերես եւ 4,2 մ խորութիւն ունեցող փոսորակի մէջ, որն էլ իր հերթին դարձել է մակերեսային ջրերի (յատկապէս անձրեւաջրերի) կուտակման աւազան: Իրականացուել են արտաքին եւ ներքին ջրահեռացման միջոցառումներ, որոնք մասամբ կանխել են ջրերի կուտակումները եւ որոշակիօրէն նպաստել եկեղեցու աւերակների պահպանմանը: Ներքին ջրահեռացմամբ համակարգը թոյլ է տալիս ջրերի հեռացումը խորանից եւ եկեղեցուն հարակից կցուած սենեակից: Արտաքին ջրահեռացումը կատարուած է 0,15 սմ շառաւղով կիսաշրջանաձեւ հատոյթով խողովակների միջոցով, որոնց թեքութիւնները որոշուել են ռելիեֆին համապատասխան:



Նկար 5. Արցախի Տիգրանակերտի վաղճրիստոնեական եկեղեցին (1) եւ արտաքին ջրահեռացման համակարգը (2)

Հանդարերդի վանքում իրականացուած պեղումները հնարաւորութիւն ստեղծեցին Արցախի միջնադարեան ճարտարապետական մշակոյթի ուսումնասիրութեան համար: Վանքը գտնուում է ԼՂՀ Նոր Շահումեանի շրջանում, որ ԺԲ.-ԺԴ. դարում մտնում էր Վերին Խաչենի կամ Ծարի իշխանութեան մէջ: Վանական համալիրն ամբողջովին բացուել է, որի պատմամշակութային հետազոտութիւնն արդէն ներկայացուած է առանձին գրքով: Բաւարար հիմքեր են ստեղծուել նաեւ յուշարձանախմբի վերականգնման համար: Ներկայացուած է յուշարձանախմբի վերականգնման հայեցակարգը՝ ելնելով կառոյցների հիմնական մասի պահպանուածութեան աստիճանից (բացառութեամբ զանգակատան, որի երկրորդ յարկն աւերուած է, գաւիթ-ժամատան, որի ծածկը մասամբ է առկայ եւ գլխաւոր եկեղեցու, որի ծածկը չի պահպանուել) կատարել ամբողջական վերականգնում՝ հնարաւորիս նուազագոյն միջամտութեամբ: 1964 թուականին Վենետիկում հրաւիրուած վերականգնող ճարտարապետների եւ տեխնի-


կական մասնագետների համաշխարհային երկրորդ համաժողովում, որ ստացաւ «Վեցնոսիկեան խարտիայ» անունումը, նոյնպէս վաւերացուեցին հնագիտական վերականգնման հիմնադրոյթները, որտեղ առաջին տեղում էր դրւում ամրակայումը¹⁵։ Դեռեւս 2005-2006 թուականներին Հանդաբերդի վանքում իրականացուել են ամրակայման եւ մասնակի վերականգնման աշխատանքներ, որպէսզի կանխուեն յետագայ փլզումները¹⁶։ Այդ աշխատանքների արդիւնքում լրացուել են հիւսիսային եւ հարաւային կցուած մատուռների պատերի բացակայող մասերը, թաղածածկերը, որմնասիւնները։ Տեղում պահպանուած փաստացի նիւթերի հիման վրայ կատարուել է որոշ հատուածների մասնակի վերականգնում։ Վերականգնուել են մատուռների արեւելեան պատուհանները։ Հիւսիսային մատուռի պատուհանի պսակի քարը, որ գտնուել էր պեղումների ժամանակ, դրուել է իր տեղը։ Երկու մատուռների ներսում էլ վերականգնուել են զոյգ յօրինուածքով որմնակամարները, որոնց վրայ էլ նստել է թաղածածկը։ Վերականգնուել է հիւսիսային մատուռի մուտքի կամարը։

Ամրակայման աշխատանքներ են կատարուել նաեւ ժամատանը։ Ներսում՝ հիւսիսարեւելեան անկեան ներքեւի՝ խարխլուած մասը քանդուել եւ վերաշարուել է, լրացուել է պատի մէջ բացուած անցքը։ Քանդուել եւ նորից կառուցուել է նոյն անկեան վերեւում որմնակամարի ձեւափոխուած եւ շաղախից անջատուած հատուածը։ Այս անկիւնը վերականգնուել է նաեւ դրսից։ Ժամատան թաղի պահպանուած հատուածը ամրացնելու եւ պահպանելու համար թաղի տակ տեղադրուել են ժամանակաւոր փայտեայ յենակներ։ Այս միջոցառումը հրատապ էր, որովհետեւ ծածկի մեծ մասի կործանուած լինելու պատճառով կորել էր թաղի կոնստրուկտիւ ամբողջականութիւնը եւ այն ցանկացած պահի կարող էր քանդուել։ Ծածկի կործանմանը նպաստող պատճառներից մէկն էլ կարող էր լինել դրա ներքին եւ արտաքին յօրինուածքների անհամապատասխանութիւնը, որի հետեւանքով թաղի վրայ առաջացել էին կրաշաղախի աւելորդ զանգուածներ։

15 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Վ. - ՆԱԼԲԱՆԵԱՆ, Գ. - ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., *անդ*, 57:

16 Մասնակի վերականգնման նախագիծը մշակել են Լիւբայ Կիրակոսեան եւ Սամուէլ Այվազեանը։ Աշխատանքներն իրականացրել են ճարտարապետ Սամուէլ Այվազեանն ու աշխղեկ Վոլոդեա Յարութիւնեանը։

Զանգակատան համար առաջարկվում է նաեւ վերակառուցում եւ վերաստեղծում¹⁷:



Նկար 6. Հանդաբերդի վանքի շինությունների հիմնական խումբը պեղումներից յետոյ
(1) մասնակի ամրակայումը (2) եւ վերակազմութեան նախագիծը (3),
(նախագիծը՝ Լ. Կիրակոսեանի):

Վանքասարի՝ է. դարի եկեղեցին, որ գտնւում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտակերտի շրջանում, Ստե-

17 ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Հանդաբերդի վանքի վերականգնման հայեցակարգը, ի Հայագիտական հանդէս, Թիւ 1, Ստեփանակերտ 2010, 127:

փանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում, Վանքասար կոչուող ամենաբարձր գագաթի վրայ, թէեւ կանգուն է մնացել, բայց կորցրել է իր դիմագիծը՝ ճարտարապետական ոճը, պատկանելութիւնը: Սա արդիւնքն է 80ականներին իրականացուած ադրբեջանական «վերականգնման», որ խաթարել է եկեղեցու ծաւալատարածական յօրինուածքն ու համաչափական համակարգը եւ աղճատել նրա նախնական կերպարը: Այսպիսի ձեւով վերականգնումը ոչ թէ չիմացութեան, այլ դիտաւորութեան արդիւնք է: Քաղաքական նպատակներ հետապնդող ադրբեջանական «հեռատես ձեռնարկը» լուրջ բարդութիւններ է յարուցել յուշարձանի նախնական տեսքի վերականգնման համար:


Սակայն փաստական կռուանների, համեմատական վերլուծութեան (մասնաւորապէս՝ Քարաշամբի, Այլաբերի, Թալինի Սբ. Աստուածածին եռախորան եկեղեցիների օրինակով) եւ տարածաշրջանի վաղ միջնադարեան հարուստ մշակութային շերտի ու ճարտարապետական համալիրների համադրութեամբ նախնական յատկագծի վրայ կարելի է այն վերակառուցել եւ մեր կողմից առաջարկուած է նրա վերակազմութեան առաջարկը¹⁸:

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաեւ արցախեան պատերազմից: Արեւմտեան ճակատում՝ բարաւորից վերեւ, արկը բաւական մեծ խոռոչ է բացել, որ սպառնում էր պատի կայունութեանը: 2011ի աշնանը այստեղ իրականացրուել են մաքրման, ամրակայման եւ բարեկարգման աշխատանքներ: Մասնակի ամրակայման աշխատանքներն աւարտուել են 2012ի Յունուարին եւ եկեղեցու գմբէթին տեղադրուել է խաչը: Վերաշարուել է արեւմտեան ճակատի քանդուած մասը: Բացուածքներում տեղադրուել են մետաղական դռներ, ներսում կառուցուել է բեմը: Կարծում ենք, սակայն, որ այսպիսի աղաւաղուած ծաւալի վրայ յաւելումներ անելն աւելորդ միջոցառում էր:

Առաւել եւս կատարուած նորոգումները գերծ չեն սխալներից (արեւելեան խորանում անմասշտաբ եւ անհամաչափ բեմի կառուցում, մուտքերում մետաղական դռների տեղադրում, ար-

18 ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Վանքասարի եկեղեցու ճարտարապետութիւնը եւ ադրբեջանական «վերականգնումը», ՊԲՀ, 2013, քիւ 1, 120-133:

Կից վնասուած արեւմտեան ճակատի խողովի վերաշարում՝ միջնադարեան շարուածքին անյարիւր եղանակով:




Նկար 7. Վանխատարի եկեղեցին ադրբեջանական «վերանորոգման» ընթացքում (1), վերանորոգումից յետոյ (2) (լուսանկարը՝ Հ. Բագէի) եւ վերակազմութիւնը (3) (Լ. Կիրակոսեան):



Նկար 8. Վանխատարի վաղժրիստոնեական եկեղեցին՝
2011-2012 նորոգումներից յետոյ:

Ցաւով պէտք է նշենք, որ այլ տեղերում նոյնպէս հանդիպում ենք անթոյլատրելի դրսեւորումների. սկսուել է երեսպապատուել Գանձասարի վանքի պարիսպը: Հասարակական դժգոհութիւններն ու մասնագիտական միջամտութիւնը, բարեբախտաբար, կասեցրել են այդ գործընթացը:



Նկար 9. Գանձասարի վանքի պարսպից մի հատուած՝
երեսպապատման գործընթացի դադարեցման իրավիճակում:

Ասկերանի շրջանի Աւետարանոց (Չանաղչի) գիւղում՝ Արցախեան ազատամարտում նահատակուած քաջորդիների յիշատակին նուիրուած յուշակոթողը կանգնեցւում է վանքի միջնադարեան պարսպի վրայ՝ խաթարելով մշակութային լանդշաֆտը:

Մասնակի հնագիտական պեղումներ են կատարուել եւ իրականացոււմ են ծաւալուն վերականգնումներ Դադիվանքում: Դադի կամ Խուժավանքը գտնոււմ է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտակերտի շրջանում: Ներկայացուել է ընդարձակ համալիրի ամբողջական վերականգնման նախագիծը¹⁹: Վերականգնումներ են իրականացուել եւ շարունակոււմ են ընթանալ վանքի ինչպէս պաշտամունքային, այնպէս էլ աշխարհիկ յուշարձանախմբերում: Վերականգնուել են բոլոր եկեղեցիները՝ Արզու Խաթունի Կաթողիկէ, Գմբէթաւոր երկրորդ, Բազիլիկ եկեղեցիները, զանգակատունը, գաւիթ-ժամատունը, հիւրատունը:



Նկար 10. Դադիվանքի վանական համալիրը վերականգնումից առաջ(1) եւ յետոյ(2):


Հնագիտորէն ամբողջովին հետազօտուել եւ վերականգնման է ենթարկուել Ծիծեռնավանքի համալիրը²⁰: Վանքը գտնոււմ է Լեւոնային Ղարաբաղի Քաջաթաղի շրջանում՝ Աղանոյ գետի աջ ափին՝ Ծիծեռնավանք գիւղի մօտ: Համալիրը հիմնովին վերականգնուել է Արցախի ազատագրումից յետոյ: Բարեկարգուել է տարածքը, վերանորոգուել է վաղբրիստոնէական բազիլիկ եկեղեցին: Տարածքում գործոււմ է վանքի պատմութեան թանգարան:

Վերականգնոււմ է իրականացոււմ է նաեւ աշխարհիկ ճարտարապետութեան ոլորտում: Մասնակի վերականգնումներ են կատարուել Ամարասի վանական համալիրում: Ներկայացուել է նաեւ վանքի կառույցների օգտագործման առաջարկ²¹:

19 Վանական համալիրի եւ հետազօտութիւնն ու վերականգնումն իրականացնում է Ս. Այվազեանը:

20 Պեղումներն իրականացրել է պ.գ.թ. Հ. Սիմոնեանի ղեկավարած արշաւախումբը՝ վերականգնող ճարտարապետ Հ. Սանատեանի մասնակցութեամբ:

21 Հեղինակներ՝ ճարտարապետներ Գ. Նազուխանեան, Մ. Տիտանեան:



Նկար 11. Միծեռնականի եկեղեցին՝ վերականգնումից առաջ (1) եւ յետոյ (2):

Պեղումներ են իրականացուել եւ ընթանում են վերականգնման աշխատանքներ Տողի մելիքական ապարանքում: Մելիքական ապարանքը գտնւում է Հաղբուլի շրջանի Տող գիւղում: Զբաղեցնում է մօտ 0,5 հեկտար տարածք: Կառուցապատուած է տարաբնոյթ շէնքերով: Համեմատաբար լաւ է պահպանուել պալատի գլխաւոր մուտքը՝ Մելիք Յգանի ընդունարանը, որ վերականգնւում է: Վերականգնւում է նաեւ Ի. դարի սկզբին կառուցուած գլխատունը²²: 2009ից ընթացող վերականգնման աշխատանքներն այսօր էլ շարունակւում են եւ ծաւալուն բնոյթ են կրում:



Նկար 12. Ամարասի վանական համալիրը նորոգումից առաջ (1) եւ յետոյ (2):

Շուշիում վերականգնուել են ոչ միայն պաշտամունքային կառույցները՝ Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոյ եւ Սբ. Աստղածածին՝ Կանաչ ժամը, այլեւ մի շարք քաղաքացիական շէնքեր, ո-

22 Յուշարձանախմբի՝ պեղումներն իրականացրել են պ.գ.թ. Ա. Ժամկոչեանն ու Ֆ. Բաբայեանը, հետազօտող՝ եւ վերականգնող՝ Գարտապետն է Մ. Սարգսեանը:

րոնք վերաօգտագործվում են որպես բնակելի շենքեր եւ մշակութային կենտրոններ:



Նկար 13. Շուշիի կերպարուեստի քանդարանը.

1. հին շենքի պահպանուած մակատը եւ 2. վերակառուցուած շենքը:

Ճարտարապետական յուշարձանների հետազոտական եւ վերականգնման աշխատանքներին անմիջական մասնակցութիւն ունի նաեւ Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական համալսարանի Ճարտարապետութեան տեսութեան, պատմաճարտարապետական ժառանգութեան վերականգնման եւ վերակառուցման, գեղեցիկ արուեստի եւ պատմութեան ամբիոնը: Մեր անմիջական ղեկավարութեամբ ուսանողները մասնակցում են յուշարձանների հափազրական աշխատանքներին, կատարում դիպլոմային նախագծեր: 2011 թուականի բակալաւրի եւ մագիստրոսի աւարտական աշխատանքների միջազգային մրցոյթում յատուկ մրցանակի են արժանացել «Արցախի Տիգրանակերտի վաղֆրիստոնէական քաղիկի եկեղեցու ամրակայում, վերակազմութիւն եւ միջավայրի բարեկարգում» եւ «Վանքասարի վաղֆրիստոնէական եկեղեցու վերակազմութիւնը» բակալաւրի աւարտական աշխատանքները: Այսպիսի միջոցառումները լուծում են նաեւ կադրերի պատրաստման խնդիրը:

Պատմաճարտարապետական յուշարձանների հետազոտութեան եւ վերականգնման գործընթացը Լեռնային Ղարաբաղում առաջին քայլերն է անում: Ոլորտը կազմակերպում է ԼՂՀ Կառավարութեան առընթեր զբօսաշրջութեան վարչութիւնը՝ ՀՀ համապատասխան մարմինների անմիջական աջակցութեամբ: Պետական որոշումներով սահմանուել են Ասկերանի, Հադրութի եւ Մարտակերտի շրջանների յուշարձանների պահպանական գոտիները, առանձնացուել են Շուշիի եւ Ասկերանի շրջաններում գտնուող ՅՈՒՆԵՍԿՕ կիրճի բնապատմական եւ Տիգրանակերտի ու Հադրութի շրջանի Տողի մելիքական ապարանքի պատմամշակու-

թային արգելոցները: Սակայն այս գործընթացում քիչ չեն նաեւ խնդիրները:

Աշխատանքների սահուն եւ արդիւնաւէտ իրականացման համար առաջին հերթին խոչընդոտ է Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան միջազգային ճանաչման հարցը: Մշակութային հետազօտութիւնները քաղաքական հարթութիւն տեղափոխելը զրկում է ոլորտին օգտուել միջազգային ինչպէս նիւթական, այնպէս էլ՝ մասնագիտական աջակցութիւնից:

Յուշարձանների վերականգնման համար բաւարար չեն նիւթական միջոցներն ու ներդրումները:

Վերականգնման գործընթացը շատ յաճախ իրականացնում են ոչ արհեստավարժ մասնագէտներ՝ արդիւնքում վերականգնման եւ շինարարական աշխատանքների որակը երբեմն ոչ պատշաճ մակարդակի է:

Հանրայայտ է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մէջ կարեւոր դերակատարում ունեն նաեւ պատմաճարտարապետական յուշարձանները, որոնց նորոգումն ու պահպանումը երկրի ռազմավարութեան կարեւոր ուղղութիւններից է: Աւարտելով՝ վաւերացնում ենք, որ Լեռնային Ղարաբաղում պատմաճարտարապետական յուշարձանների պահպանութեան եւ վերականգնման գործը ընթանում է՝ արձանագրելով յաջողութիւններ, ինչպէս նաեւ կարիք ունի բարելաւման:

ԼԻԻԲԱՅ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Summary

THE PROCESS OF RECONSTRUCTION OF
HISTORICAL-ARCHITECTURAL MONUMENTS IN
NAGORNO-KARABAKH

LYUBA KIRAKOSYAN

Reflecting on the Armenian Genocide, we subconsciously remember the inhuman slaughter of one and a half million innocent victims murdered in various ways. But there are losses of many monuments as well. Those losses completely correspond to the classification of the cultural genocide adopted by international organizations.²³

This cultural genocide was carried out not only on the whole territory of our historical motherland but also in Soviet and present day Azerbaijan. Policies pursued by the Azerbaijan government against Christian Armenian architectural monument went on in several ways: keeping complete silence in publications, misinterpretation of ethno-cultural and religious identity, deliberate destruction and conversion of monuments, different barbaric actions (explosion, destruction, arson, and using the stones of the monuments as building material), converting Armenian churches into Muslim mosques or other building, covering many Armenian monuments with earth and soil, prohibiting visits and investigation, converting spatial composition, image and identity under the name of reconstruction and preservation.

Before the liberation movement, those devoted to Armenian Studies were deprived of carrying out complex investigation in Nagorno-Karabakh. Today on the already liberated territories the conditions for research, preservation, and reconstruction have become favorable. Investigation didn't begin during military actions but immediately after the liberation of the territories. As a result of a ten-year archeological excavation of the Artsakh expedition²⁴ a number of

²³ Charny, I. W., *Classification of Genocide Categories, Encyclopedia of Genocide*, California 1999, p. 9.

²⁴ Head of the expedition H. Petrosyan, architect L. Kirakosyan, V. Safaryan, A. Jamkochyan, I. Karapetyan, T. Vardanesova

monuments (Tigranakert of Artsakh, early Christian church of Vankasar, monastery complex of Handaberd) have been excavated, properly presented, and taken under state protection. Large-scale reconstruction is carried out in Dadvank²⁵ monastery. The complex Tsitsernavank²⁶ is completely archeologically studied and reconstructed. Some secular buildings are being restored. Amaras monastery has been partly reconstructed.²⁷ Excavation and reconstructive work is being carried on in the prince's castle in Togh.²⁸

Not only the buildings of worship (St. Savior Ghazanchechots and St. John Green Chapel) have been restored, but also some secular buildings have been rebuilt and are now used, such as dwellings and cultural centers in Shushi.

Department of Architectural Theory, Department of Historical-Architectural Restoration and Reconstruction of Heritage, and the Fine Arts and History departments of Yerevan State University of Architecture and Construction take part in reconstruction and preservation of architectural monuments. Under our direct leadership, students take part in measuring work and diploma projects. In 2011, at the international competition of Bachelor's and Master's diploma works, "Reinforcement, Reconstruction and Spatial Improvement of the Early Christian Basilica Church of Tigranakert of Artsakh" was awarded a special prize.

This kind of participation in restoration work can also solve the problems of preparing future scholars. The process of investigation and restoration of the historical architectural monuments in Nagorno Karabakh is taking its first steps. The sphere is organized by the department of tourism in the government of the Nagorno-Karabakh Republic supported by the corresponding organs of the Republic of Armenia. Yet, there are many problems in this sphere. First of all the problem of international recognition of the Nagorno-Karabakh Republic slows down the smooth and efficient performance of the work. The transformation of the cultural question into a political tool frequently deprives the sphere of both international material and skilled specialists. There is lack of restoration material and specialists in both Armenia and Nagorno-Karabakh. The unique landscape of Artsakh also causes complication in restoration as it requires serious material expenses. It is also well known that for the solution of the Nagorno-Karabakh issue, a great role is given to the reconstruction and preservation of historical architectural monuments which is one of the most important goals of the country's strategy.

²⁵ Research and preservation of the monastery complex and church is carried out by S. Ayvazyan.

²⁶ Excavations were carried out by Dr. H. Simonyan, reconstruction architect H. Sanamyan

²⁷ Architects G. Nazluhkanyan and M. Titanyan

²⁸ Excavations were carried out by Dr. A. Jamkochyan and F. Babayan, architect M. Sargisyan